

**Վիճակագրական արտադրանք – Ֆինանսական կազմակերպությունների հատված  
(եռամսյակային)**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
<i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Ցուցանիշները թույլ են տալիս վերլուծել և գնահատել երկրի ֆինանսական հատվածի գործունեությունը, մշակել դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունը, գնահատել ֆինանսական կայունությունը:</p>
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	<p>Քանի որ տեղեկատվության աղբյուրը համարվում է ՀՀ կենտրոնական բանկը՝ որպես վարչական ռեգիստր, տեղեկատվության տրամադրման հետ կապված պարզաբանումներ, խորհրդակցություններն աշխատանքային քննարկումներ իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան բաժինների աշխատակիցների հետ:</p>
	1.3 Արտադրանքի նպատակների սահմանում	<p>Միասնական և համակարգված ձևով օգտագործողներին տրամադրել վիճակագրական տեղեկատվություն ֆինանսական հաստատությունների հատվածի վերաբերյալ:</p>
	1.4 Հասկացությունների որոշում	<p>Ֆինանսական համակարգի ընդհանրական ցուցանիշներում ներկայացվում են փոխհարաբերությունները (պահանջները և պարտավորությունները) արտաքին աշխարհի հետ, պահանջները տնտեսության մյուս հատվածների՝ կառավարության և իրական հատվածի նկատմամբ, ինչպես նաև ֆինանսական համակարգի իրացվելի պարտավորությունները:</p> <p>Ֆինանսական հատվածի մեջ ընդգրկվող սուբյեկտների փոխադարձ պահանջներն ու պարտավորությունները զտվում են միմյանցից, որպեսզի ամփոփ հաշվեկշիռն արտահայտի ֆինանսական հատվածի ընդհանուր փոխհարաբերությունները տնտեսության մյուս հատվածների հետ:</p> <p>Ֆինանսական համակարգի զուտ արտաքին ակտիվները (ԶԱԱ) ներկայացնում են կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվների հանրագումարը:</p> <p>Զուտ ներքին ակտիվները ներկայացնում են կառավարության նկատմամբ զուտ պահանջների, տնտեսության իրական հատվածի նկատմամբ համախառն պահանջների և զուտ այլ ակտիվների գումարը:</p>

		<p>Կառավարության նկատմամբ զուտ պահանջները ներկայացնում են կենտրոնական բանկի, առևտրային բանկերի վարկային կազմակերպությունների զուտ պահանջների հանրագումարը: Տնտեսության իրական հատվածի նկատմամբ պահանջները հաշվարկվում են որպես տնտեսության իրական հատվածի նկատմամբ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների պահանջների հանրագումար:</p> <p>Զուտ այլ ակտիվները հաշվարկվում են որպես բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների զուտ այլ ակտիվների հանրագումար: Այսպիսով, ֆինանսական համակարգի պարտավորություններում ընդգրկվում են փողի զանգվածի տարրերը (բացառությամբ վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների) և վարկային կազմակերպությունների իրացվելի պարտավորությունները: Ֆինանսական համակարգից դուրս կանխիկը՝ ԿԲ-ից դուրս կանխիկի և առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների դրամարկղերում առկա ՀՀ դրամի տարբերությունն է:</p> <p>Ֆինանսական համակարգի (ներառյալ ՀՀ ԿԲ-ն, առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները) ամփոփ հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Զուտ արտաքին ակտիվներ</li> <li>2. Զուտ ներքին ակտիվներ <ol style="list-style-type: none"> <li>2.1 Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը</li> <li>2.2 Պահանջներ տնտեսությանը</li> <li>2.3 Այլ ակտիվներ (զուտ)</li> </ol> </li> </ol> <p>Ֆինանսական համակարգի իրացվելի պարտավորություններ</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կանխիկը ֆինանսական համակարգից դուրս</li> <li>2. Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով</li> <li>3. Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով</li> <li>4. Արտարժույթային ավանդներ</li> <li>5. Վարկային կազմակերպությունների ներգրաված փոխառություններ</li> </ol>
	1.5 Տվյալների առկայության ստուգում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա:
	1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում	Արմատատի համապատասխան բաժնի կողմից իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող Դրամավարկային հիմնական ցուցանիշների շարքերի նախապատրաստական և կազմման աշխատանքներ:
Նախագծում		
	2.1 Արդյունքների նախագծում	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի և Արմատատի միջև

		կնքված տեղեկատվության փոխանակման համաձայնագրի հիման վրա:
	2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում	
	2.3 Տվյալների հավաքման նախագծում	Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունը ԿԲ կողմից կազմվում է ինչպես ԿԲ-ի տվյալների, այնպես էլ ԿԲ-ին հաշվետու սուբյեկտներից ստացված հաշվետվությունների հիման վրա: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ին հաշվետու սուբյեկտների (ՀՀ ֆինանսական համակարգի բոլոր սուբյեկտները) հաշվետվությունների հիման վրա կազմվում և Արմատատին է տրամադրվում ֆինանսական համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:
	2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում	
	2.5 Մշակման և վերլուծության նախագծում	Ըստ դրամավարկային միջնորդության համակարգի գործունեությունը բնութագրող ցուցանիշների Արմատատի ֆինանսների վիճակագրության բաժնի կողմից կատարվում է ցուցանիշների շարքերի կազմումը, նախորդ ժամանակշրջանների նկատմամբ տեմպերի հաշվարկը:
	2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում	
	<i>Կառուցում</i>	
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացված դրամավարկային ցուցանիշների ամսական և եռամսյակային տեղեկանքների (առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ) հիման վրա իրականացվում է անհրաժեշտ տվյալների մշակման, կազմման և կառուցման աշխատանքներ:
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական և եռամսյակային պարբերականությամբ՝ համաձայն տարեկան վիճակագրական ծրագրի:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումն իրականացվում է իրար հաջորդող հետևյալ փուլերով՝ 1. տեղեկատվության հավաքում, 2. ստուգումներ և ճշգրտումներ, 3. տեղեկատվության մուտքագրման և մշակման աշխատանքներ (Microsoft Office Word և Excel ծրագրային փաթեթ), 4. ստացված ամփոփ տեղեկատվության համեմատում համապատասխան դինամիկ շարքերի հետ, 5. տեղեկատվության տարածում ինչպես թղթային, այնպես էլ

		Էլեկտրոնային եղանակով՝ տարեգրքերում, տեղեկատվական զեկույցներում, վիճակագրական ժողովածուներում, ինչպես նաև տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում պաշտոնական պատասխան գրությունների միջոցով:
	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Տրամադրված դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշները պարբերաբար ենթարկվում են համապատասխան փոփոխությունների՝ էլնելով մեթոդական փոփոխություններից և վերանայումներից:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Իրականացվում են ցուցանիշների լրացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումների կազմում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն տրամադրողներին (ռեսպոնդենտներին): Ամփոփվում են տեղեկատվություն ներկայացնողների հետ ցուցանիշների վերաբերյալ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունները:
<i>Հավաքում</i>		
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	
	4.2 Հավաքման կազմակերպում	Քանի որ վիճակագրական տեղեկատվության աղբյուրը որպես վարչական ռեգիստր համարվում ՀՀ կենտրոնական բանկը, հետևաբար Արմստատի կողմից իրականացվում է դրամավարկային միջնորդության համակարգի վերաբերյալ անհրաժեշտ ցուցանիշների ներկայացման հայտ պահանջ: Հավաքման կազմակերպման համար իրականացվում են տվյալների ներկայացման մեթոդական պարզաբանումներ, քննարկումներ և դրանց հրապարակման համար անհրաժեշտ ցուցանիշների շարքերի կազմման հավաքման աշխատանքներ:
	4.3 Հավաքման իրականացում	Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է Արմստատի ֆինասների վիճակագրության բաժնի կողմից փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով՝ համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման:
	4.4 Հավաքման վերջնականացում	Հավաքված տեղեկատվությունը ստուգաճշտման ենթարկվելուց հետո մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է Microsoft Office Word և Excel ծրագրային փաթեթներով:
<i>Մշակում</i>		
	5.1 Տվյալների ինտեգրում	Իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկից ստացվող համապատասխան տեղեկատվության միավորում մեկ միասնական տվյալների բազայում, որի արդյունքում բացառվում են կրկնությունները:
	5.2 Դասակարգում և կողավորում	Դրամավարկային միջնորդության համակարգի ամսական տեղեկանքը մշակվում և դասակարգվում է հետևյալ կերպ. <ul style="list-style-type: none"> <li>• Փողի բազայի կազմը,</li> <li>• Փողի զանգվածի կազմը,</li> <li>• Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները,</li> <li>• Առևտրային բանկերի վարկերի կազմը,</li> <li>• Առևտրային բանկերի վարկերի կառուցվածքը,</li> <li>• ՀՀ բանկային համակարգում հաճախորդների և նրանց</li> </ul>

		<p>հաշիվների քանակը,</p> <ul style="list-style-type: none"> <li>• Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների,</li> <li>• Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների,</li> <li>• Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների,</li> <li>• ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառությունը:</li> </ul>
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում են ներկայացված տեղեկատվության ստուգաճշտումներ: Ամսական և եռամսյակային տվյալները վերանայվում և ճշգրտվում են հաջորդ ամսում կամ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացվող տեղեկանքների հիման վրա:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Իրականացվում են բացակայող ցուցանիշների համալրումներ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացվող տեղեկանքի հիման վրա: Համալրված տեղեկատվությունը հաջորդող ժամանակահատվածում տվյալների առկայության պարագայում ենթակա են ճշգրտման:
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	Գնահատումներ և լրահաշվարկներ այլ ցուցանիշների հաշվարկման համար առկա չեն:
	5.6 Կշիռների հաշվարկում	
	5.7 Ագրեգատների հաշվարկում	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա իրականացվում է ամփոփ տվյալների ստացում ըստ առանձին վիճակագրական ցուցանիշների՝ նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	Հաճախ, ելնելով օպերատիվ վիճակագրական տվյալների ստացման անհրաժեշտությունից, նախնական տեղեկատվության հիման վրա կատարվում է նախնական ցուցանիշների հաշվարկ, որոնք հետագայում ենթակա են ճշգրտման:
	<i>Վերլուծություն</i>	
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	Ստացված տեղեկանքների հիման վրա իրականացվում է վիճակագրական ցուցանիշների խմբավորումներ, ինչպես նաև դինամիկ շարքերի կառուցում ամփոփ տեղեկատվության ներկայացման, ինչպես նաև ցուցանիշների դինամիկ շարքերի կառուցման համար:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների և մեթոդաբանական ուղեցույցների:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով տնտեսությունում տեղի ունեցող տարաբնույթ երևույթների ազդեցությունը:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը

		անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99454478.pdf">http://www.armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ ամփոփ տեղեկատվության տարածումը իրականացվում է ամփոփ ցուցանիշների վերլուծություն՝ ըստ դրանց դինամիկ շարքերի:
	<i>Տարածում</i>	
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Իրականացվում են հրապարակման ենթակա վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ համապատասխան աղյուսակների պատրաստում և վերջնական ճշգրտման աշխատանքներ, ինչպես նաև կատարվում է դինամիկ շարքերի արդիականացում: Անհրաժեշտության դեպքում նաև փոփոխություններ և/կամ լրացումներ են կատարվում համապատասխան ցուցանիշի հասկացություններում և մեթոդաբանական պարզաբանումներում:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	Տարածվող արտադրանքի համար իրականացվում են արտադրական բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին: Դրամավարկային միջնորդության համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը հայերեն, անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի և վիճակագրական ժողովածուների միջոցով. 1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն (տարեկան) ժողովածու, 3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը ամսական տեղեկատվական զեկույց Էլեկտրոնային տարբերակները հասանելի են Արմստատի պաշտոնական կայքում <a href="http://armstat.am/am/?nid=45">http://armstat.am/am/?nid=45</a> , <a href="http://armstatbank.am/Selection.aspx?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a&amp;px_db=ArmStatbank&amp;px_type=PX&amp;px_language=hy&amp;px_tableid=ArmStatbank%5c1+Economy+and+finance%5c14+Government+Finances%5c20-fin-2014.px">http://armstatbank.am/Selection.aspx?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a&amp;px_db=ArmStatbank&amp;px_type=PX&amp;px_language=hy&amp;px_tableid=ArmStatbank%5c1+Economy+and+finance%5c14+Government+Finances%5c20-fin-2014.px</a> հղմամբ, իսկ հրապարակումները՝ <a href="http://armstat.am/am/?nid=82">http://armstat.am/am/?nid=82</a> , հղմամբ:
	7.3 Տարածման արտադրանքների թողարկման կառավարում	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: ՀՀ ԿԲ կողմից ներկայացված տեղեկանքի փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:

	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների կողմից չիրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում՝ հնարավորության սահմաններում, իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
	<i>Գնահատում</i>	
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Ըստ անհրաժեշտության իրականացվում է ամսական ցուցանիշների ամփոփման արդյունքների համեմատում եռամսյակային ցուցանիշների հետ:
	8.2 Գնահատման իրականացում	Դրամավարկային միջնորդության համակարգի ցուցանիշների որակի կառավարման տեսանկյունից իրականացվում են միևնույն աղբյուրից ստացվող ցուցանիշների համեմատություններ:
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	Համեմատվող միևնույն ցուցանիշի վերաբերյալ ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ: